

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<p>Պաշտոնի (զբաղմունքի) 2004 Կապի ցանցեր և կոմուտացիոն համակարգեր, տեխնիկ անվանումը</p>	
<p>Ղեկը Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը շահագործում և սպասարկում է կապի ցանցերի կոմուտացիոն համակարգերի սարքավորումները էլեկտրական և էլեկտրոնային կապի ցանցերի կառավարման կենտրոններում, տեխնիկական շահագործման կենտրոններում և տարբեր նշանակության կոմուտացիոն համակարգերում: Տեխնիկը հիմնականում հսկում է, համակարգի որակյալ գործունեությունը, վերլուծում է սարքավորումների որակական և տեխնիկական ցուցանիշների պատշաճ մակարդակը, ախտորոշում և վերացնում է անսարքությունները: Տեխնիկը նաև պետք է կարողանա կառավարել աշխատանքային խմբեր, պլանավորել կազմակերպել աշխատանքներ, մասնակցել տնտեսական արդյունավետության հաշվարկների կատարմանը և անվտանգության կանոնները գործադրել աշխատավայրում:</p>	
<p>Խնդիրների բնագավառ 1 Իրականացնել կապի կոմուտացիոն համակարգերի և ցանցերի գործողությունների որակի հսկումը, սարքավորումների գործողությունների որակական և տեխնիկական վերլուծությունը, ախտորոշել և վերացնել անսարքությունները:</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p> <p>Կատարման չափանիշները</p>	<p>Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը հսկում է կապի կոմուտացիոն համակարգերի և ցանցերի գործողությունների որակը, կատարում է գործողությունների որակական և տեխնիկական վերլուծություն, կապի կոմուտացիոն համակարգերի և ցանցերի սարքավորման կամ ցանցի տիպին և տեսակին համապատասխան ուրվագծում է անսարքությունների ենթադրվող պատճառները, դրանցից յուրաքանչյուրի հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումները և մատնանշում անսարքության հիմնավոր պատճառը</p> <ul style="list-style-type: none"> • իրականացված է կապի կոմուտացիոն համակարգերի և ցանցերի գործողությունների որակի հսկումը • կատարված է գործողությունների որակական և տեխնիկական վերլուծությունը • սարքավորման տիպին և տեսակին համապատասխան նրա աշխատանքի առանցքային յուրահատկություններից ախտորոշված է անսարքությունը • սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը ուրվագծված է • անսարքության իրական պատճառները անսխալ ախտորոշված են

Խնդիրների բնագավառ 2		Կիրառել ստուգման և փորձարկման
սարքավորումները աշխատանքում		
Աշխատանքային գործընթացը	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը ստուգում է սարքավորման աշխատանքը շահագործման բոլոր ռեժիմներում կիրառելով համապատասխան սարքերը	
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ▪ սարքավորումը շահագործման բոլոր ռեժիմներում նորմալ է աշխատում ▪ ռեժիմների փոփոխությունների ընթացքում աշխատանքի շեղումներ չեն առաջանում 	
Խնդիրների բնագավառ 3		Կազմակերպել կատարողների կոլեկտիվի աշխատանքը, պլանավորել և կազմակերպել արտադրական աշխատանքները, կատարել օպտիմալ որոշումների ընտրություն ոչ ստանդարտ իրավիճակներում պլանավորման ժամանակ, մասնակցել արտադրական գործունեության տնտեսագիտական էֆեկտիվության գնահատմանը , արտադրական տեղամասում ապահովել անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնները
Աշխատանքային գործընթացը	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը կազմակերպում է կոլեկտիվի աշխատանքը տեղամասում, կատարում է օպտիմալ որոշումների ընտրություն ոչ ստանդարտ իրավիճակներում պլանավորման ժամանակ, հսկում է անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը	
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ▪ տեխնիկայի և հակահրդեհային անվտանգությունը ապահովված է ▪ ոչ ստանդարտ իրավիճակներում պլանավորման ժամանակ օպտիմալ որոշումները ընտրված են ▪ արտադրական գործունեության տնտեսագիտական էֆեկտիվությունը գնահատված է 	
Խնդիրների բնագավառ 4		Մոդելացնել տարբեր մակարդակով ցանցերի ճարտարապետությունը, կատարել կոմուտացիոն սարքերի պարամետրերի չափումներ, վերացնել հայտնաբերած անսարքությունները
Աշխատանքային գործընթացը	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը մոդելավորում տարբեր մակարդակով ցանցի ճարտարապետությունը, կատարում է կոմուտացիոն սարքերի պարամետրերի չափումներ, վերացնում է հայտնաբերված անսարքությունները:	
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • ցանցի ճարտարապետությունը մոդելավորված է • կոմուտացիոն սարքերի պարամետրերի չափումները կատարված է • անսարքությունները հայտնաբերված են 	

Խնդիրների բնագավառ 5 հաշվարկ	Կատարել հեռախոսային բեռնվածության
Աշխատանքային գործընթացը Կատարման չափանիշներ	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը կատարում է բեռնվածության հաշվարկ օրվա տարբեր ժամերին <ul style="list-style-type: none"> • բեռնվածության հաշվարկը կատարված է
Խնդիրների բնագավառ 6	Կարդալ ֆունկցիոնալ հանգույցների և կառավարող կառուցվածքների սկզբունքային սխեմաները, կատարել հաղորդման համակարգերի ուղիների հիմնական պարամետրերի չափումները, հաշվարկել տիպային էլեկտրական սխեմաների և էլեկտրոնային կառուցվածքների պարամետրերը օգտագործելով հաշվողական տեխնիկայի միջոցները:
Աշխատանքային գործընթացը Կատարման չափանիշներ	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը կարդում է ֆունկցիոնալ հանգույցների և կառավարող կառուցվածքների սկզբունքային սխեմաները, կատարում է հաղորդման համակարգերի ուղիների հիմնական պարամետրերի չափումները, հաշվարկում է տիպային էլեկտրական սխեմաների և էլեկտրոնային կառուցվածքների պարամետրերը օգտագործելով հաշվողական տեխնիկայի միջոցները: <ul style="list-style-type: none"> • հաղորդման համակարգերի ուղիների հիմնական պարամետրերի չափումները կատարված են • տիպային էլեկտրական սխեմաների և էլեկտրոնային կառուցվածքների պարամետրերը հաշվարկված են
Խնդիրների բնագավառ 7 օգտագործողներին	Խորհրդատվություն տրամադրվի
Աշխատանքային գործընթացը Կատարման չափանիշներ	Տեխնիկը կապի և կոմուտացիայի սարքավորումների շահագործողներին անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում տարբեր սարքերի և հանգույցների պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ <ul style="list-style-type: none"> ▪ ըստ կոնկրետ պայմանների շահագործողները ստացել են օբյեկտիվ խորհրդատվություն ▪ շահագործելը պարզագույն իրավիճակում կանխում է սարքերի շարքից դուրս գալը ▪ սարքերը անխափան շահագործվում են
Պատասխանատվությունը	Կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի տեխնիկը պատասխանատու է <ul style="list-style-type: none"> • էլեկտրական և էլեկտրոնային կապի ցանցերի և կոմուտացիոն համակարգերի շահագործման և սպասարկման համար • ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար • անսարքությունները ճիշտ ակտորոշելու

	համար
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	հայերեն - գերազանց ռուսերեն - բավարար մեկ օտար լեզու /ռուսերենից բացի/ - բավարար
Համակարգիչ	MS Word - բավարար Internet Explorer - բավարար LabView, Multisim - բավարար
Գիտելիքները	<p>Տեխնիկը պետք է իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ գծագրերի և սխեմաների կառուցման հիմնական կանոնները, ▪ նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները, ▪ էլեկտրառադիոնյութերի հիմնական ֆիզիկական հատկանիշները, ▪ ԷՀՄ-ների հիմունքները, ▪ միկրոպրոցեսորային համակարգերի հիմունքներ, ▪ թվային և անալոգային կոմուտացիոն համակարգերի կառուցվածքը և կառուցման սկզբունքները, ▪ կոմուտացիոն համակարգերի տեխնիկական շահագործման և կազմակերպման սկզբունքները, ▪ տարբեր տեսակի կապի ցանցերի համադրման սխեմաներ, ▪ էլ. ԱՀԿ-ների համադրումը միատիպ և էլ.մեխանիկական ԱՀԿ-ների հետ, ▪ օպտիկական և էլ. մալուխների կառուցվածքը և պարամետրները, ▪ անվտանգության հիմնական կանոններն ու նորմերը
Կարողությունները և հմտություններ	<p>Տեխնիկը պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ օգտվել տեխնիկական նկարագրերից, ▪ օգտվել նորմատիվ և մասնագիտական գրականությունից վերանորոգումներ և շահագործման աշխատանքներ իրականացնելիս, ▪ շահագործման ժամանակ օգտվել ժամանակակից ծրագրային փաթեթներից, ▪ իրականացնել կոմուտացիոն համակարգերի սարքավորումների չափագրումներ, ▪ վերացնել անսարքությունները, ▪ օգտագործել դիագնոստիկ փորձարարական սարքավորումներ, ▪ հասկանալ հիմնական ֆունկցիոնալ հանգույցների սխեմաներ,

	<ul style="list-style-type: none"> ▪ իրականացնել հիմնական պարամետրերի չափագրումներ, էլ.սխեմաների չափագրումներ, ▪ գնահատել գործարկման արդյունավետությունը, ▪ գնահատել տեխնիկական անվտանգության վիճակը տվյալ տեղամասում:
Վերաբերմունքը	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, նորը ընկալող